

# ԾՆՈՒՆԴԻՆ ԿԸ ԾՆԻՆ, ԾՆՈՒՆԴԻՆ ՉԵՆ ՄԵՌՆԻՐ

*Posted on July 25, 2022 by Keghart*



Category: [Opinions](#)



**Սիլվա Իսկիկեան Մահրեճեան, Լոս Անճելըս, 20 Յունիս 2022**

Ծննդեան տօնին խորհրդաւոր ու բարի առաւօտն էր: Շուրջս ամէն բան ուրախութիւն կը յուշէր՝ Կաղանդի ծառին լոյսերը, երեխաներու ծիծաղը եւ մօտակայ եկեղեցիներէն լսուող շարականները:

Հայրս իր կիրակնօրեայ կապոյտ համազգեստով, բծախնդրօրէն սափրուած ու սանտրուած մազերով, եկեղեցիէն տուն վերադարձած էր: Դէմքին վրայ կ'արտացոլար Ս. Ծննդեան պատգամին օրհնաբեր փայլքը: «Հայրի՛կ, կը փայլիս: Քեզմէ պէտք է օրհնակ առնեմ եւ գոնէ տօնական օրերուն եկեղեցի յաճախեմ»:

Դժբախտաբար, տօնական սեղանին ճաշատեսակներուն պատրաստութիւնը առաջնահերթ մտահոգութիւնս կ'ըլլար: Ամուսինս կը շեշտէր ըսելով, որ տօնական սեղանը պէտք է ճոխ ըլլայ: Երբ որ հարցնէի. «Կարո՞ւ, այս ճաշատեսակները բաւարար՞ են»: Առանց մտիկ ընելու նշածներս, կը պատասխանէր. «Ո՛հ, քիչ է, չի՛ բաւեր»: Այդ անբաւարար քանակը՝ օրերով չէր սպառեր...:

Հօրս աղօթքով սկսանք մեր ճաշը, ապա անտարանական երգացանկէն, հայրս եւ երախաներս ծննդեան երգեր երգեցին, իսկ ամուսինս՝ Կարօն, կը շեշտէր, թէ առաքելական շարականները ուրիշ են...: Ինքն ալ իր կարգին երգեց՝ «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» շարականը: Ինծի համար երկու երգացանկերն ալ սիրելի են: Աւելի ի՞նչ խնդրէի Աստուծմէն՝ բարիքը առատ, օճախս ուրախ...:

-Պզտիկներ՛ր, լուացուեցէ՛ք, հագուեցէ՛ք, պէտք է աճապարենք, որպէսզի Կաղանդ Պապուկին հասնինք:

Հայրս նստասենեակ անցած էր ու հեռատեսիլէն սփռուող ոտնագնդակ կը դիտէր: Խաղացող խումբերը՝ ՀՄՄ եւ ՀՄԸՄ էին: Թէեւ հօրս նախասիրութիւնը գիտէի, բայց եւ այնպէս հարցուցի. «Հայրի՛կ, ո՞ր խումբը կ'ուզես, որ յաղթէ»: Ծիծաղը դէմքին, զիս գոհացնելու ջանքով ըսաւ. «Երկուքն ալ հայկական խումբեր են, որ մէկը որ յաղթէ, կ'ուրախանամ, բայց անշուշտ գիտես...»:

Կատակելով ըսի.

-Հայրի՛կ, պատասխանդ նման է այն ասացուածքին, որ կ'ըսէ. «Խնձորը կը սիրեմ, բայց տանձը հոգիս է»:

Երկուքս ալ երգիծանքը սիրող ենք, կատակելով ու խնդալով բաժնուեցանք:

Կաղանդ պապուկին ժամանելիք վայրը արեւմտեան Պէյրուսի մէջ, խճողուած ու աղմկալից սրահ մըն էր: Բաւական դժուարութեամբ, ես ու երեք երախաներս տեղաւորուեցանք...: Յանկարծ, դիմացս կանգ առաւ ամուսինս մօտիկ բարեկամը՝ Շահէնը: Ակամայ մարմինս սարսռաց...:

-Սիվա՛, պետք է ձեզ տուն տանիմ, որովհետեւ հայրդ սրտի տազնապ ունեցաւ:

-Ի՞նչ տազնապ, ի՞նչ բան, տակաւին կես ժամ առաջ ֆութպոլ կը դիտեր:

Տուն դարձի ճամբան դար մը տեւեց...: Կարծես սիրտս արցանի մէջ առնուած էր, իսկ գանկս՝ փշրող հարուած ստացած:

Վերջապէս հասանք տուն...: Ապշեցնող լռութիւն մը կը տիրեր: Քնացած էր ֆութպոլ դիտողը, ծննդեան երգեր երգողը, կատակողը, ինամքով սափրուած ու փայլուն դէմքով բարի հայրիկս: Մինչ ես վշտաբեկ ու դառնացած, ոտքերս գետին զարնելով, լացի, պոռացի, յանդիմանեցի. «Այս ի՞նչ հարուած էր, հայրի՛կ: Ծնունդին կը ծնին, Ծնունդին չեն մեռնիր»:

### **Անհասանելի Երազը**

-Ա՛խ, եթէ քիչ մը հասակս բարձր ըլլար...: Կեանքիս գերագոյն երազն էր մասնագետ երաժիշտ եւ երգիչ դառնալ: Ինծի համար երզն ու նուազը թթուածինի նման են, իսկ օրուան քսանչորս ժամերուս համար՝ բացարձակ անհրաժեշտութիւն:

Հօրս սիրտին մէջ մխացող ակօսներ կային...: Անբուժելի ցաւ էր իր «անհասանելի երազը»...:

-Ինծի ըսին, թէ գեղեցիկ ձայն ունիմ եւ շատ ճիշդ կ'երգեմ, «բայց բեմը իր պահանջքը ունի»...: Քանի մը սանթիմէթը պակսող հասակիս տակ, ոտնակոխ շարտեցին՝ տաղանդս, երազս եւ հոգիս:

Ամեն անգամ, երբ հայրս իր շրթնահարմոնը (harmonica) նուագէր, մեղեդիին մէջ իր հոգին կը դներ: Կը նոյնանային ինքը եւ երաժշտութիւնը: Երանութեան ժպիտը կը փայլէր իր դէմքին եւ անսահման գոհունակութիւն մը կը փայլատակէր իր աչքերէն: Իր անցեալի որբուկի յիշողութիւնները ու ներկային ցաւոտ խոցերը՝ երաժշտութեամբ կը դարմանէր:

Գեղեցիկ հագուիլ շատ կը սիրէր, յատկապէս՝ երբ եկեղեցի պիտի յաճախէր: Պայմանաւ, որ կօշիկը «տաս-տափակ չըլլար» եւ «հաստ կրունկներ ունենար»: Իր շահած երկու-երեք սանթիմէթով՝ հասակին եւ անհաս երազին ցաւը կը մեղմէր...:

Մօրս մահը ստիպեց երիտասարդ հօրս, իր մխիթարանքը գտնել՝ մե՛րթ Աստուածաշունչին ու մե՛րթ շրթնահարմոնին մէջ:

-Պարո՛ն Փօլ, մենք ռումբերէն կը սարսափինք, չենք իմանար ո՞ւր պահուըտինք, իսկ դուն անվախ ու անվրդով՝ տանդ մուտքին նստած, կա՛մ կը գրես, կա՛մ կը նուագես:

Աստուածավախ իր խառնուածքով ու անհուն հաւատքով՝ ոչինչէ կը սարսափէր: Կարծես երկնային էակ մը իր ականջին փսփսացած էր. «Մի՛ վախնար, դուն ռումբերէն պատսպարուած ես ու պիտի չմեռնիս»:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին ամենէն թեժ օրերուն, նպատակադրեց եւ

**իրագործեց:**

Սամուել Փաշկեանի հեղինակութեամբ երկու հարցագրօրյկ վերցուց, առաջինին մէջ Աստուածաշունչէն 1000 հարցումներ կային, իսկ երկրորդին մէջ՝ 1500: Ուսումնաստենչ աշակերտի նման, չընկրկող կամքով, գիշերը ցերեկին խառնեց եւ իր բազմաթիւ պարտականութիւններուն կողքին, անսպառ շունչով պրպտեց, գրեց, սրբագրեց... եւ վերջապէս, երկու վկայական՝ արդարօրէն ձեռք ձգեց:

Ծննդեան ակետումը երգող խումբերուն հետ, իր 65 տարիները շալկած՝ կ'ընկերակցեր երիտասարդներուն: Իր կենսուրախ խառնուածքով ու եռանդով՝ անխոնջ կը շրջեր, մինչեւ առաւօտեան ժամերը: Իր երաժշտական տաղանդով ու երգչախմբային գիտելիքներով՝ կը զանազանուէր իր հաճելի թենորով ու երգելու ոճով:

Չաւակներս շատ բախտաւոր էին իրենց մեծ հօրմով: Ան իր ծով համբերութեամբ ու գորովալից սիրով կը գուրգուրար եւ կը զբաղեցներ զանոնք՝ իրենց պատմութիւններ պատմելով, դաստիարակչական խաղեր կազմակերպելով ու շրթնահարմոն նուագելով: Ան յաճախ կ'ըսէր. «Աստուած ի՛մ, մեղք մի՛ գրեր, այս պզտիկները շա՛տ կը սիրեմ»:

Դժբախտաբար, զաւակներուն չվիճակուեցաւ մեծ մայրեր ունենալ, բայց ունեցան մէկ մեծ հայր, որ իր բարի հոգիով ու անհուն սիրով, չորս հոգիին պակասը լրացուց:

Օր մըն ալ՝ մռայլ ու անշշուկ, տխուր հեքիաթի մը նման, անակնկալ ու լո՛ւռ հեռացաւ...: Իր ետին երեք խնձոր թողնելու փոխարէն, ձգեց Աւետարան մը, երկու վկայական, շրթնահարմոն մը, «հասակաւոր» կօշիկ մը եւ «կրունկով» երագ մը:

**There are no comments yet.**